Հայաստանի Հանրապետություն
Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագրի (ՈՀԱԾ) նախապատրաստում
Դրամաշնորհի No.: TF017003
Ծրագրի ID No. P147919

ՇԱՀԱԳՐԳՌՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏՆԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ
(ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ – ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ)

«Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագրի (ՈՀԱԾ) համար ինստիտուցիոնալ զարգացման ուսումնասիրություններ» ISMP/GR/CQS/SW-14/001

Հայաստանի Հանրապետությունը 495,000 ԱՄՆ դոլար գումարի դրամաշնորհ է ստացել Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի կարողությունների զարգացման բազմադոնորային վստահառուական հիմնադրամից (ԵԿԱԿԶԱՐ ՎՀ), որը ղեկավարվում է Զարգացման և վերակառուցման միջազգային բանկի/Միջազգային զարգացման ընկերակցության (“Համաշխարհային բանկ”) կողմից և մտադիր է միջոցների մի մասն օգտագործել խորհրդատվական ծառայությունների համար: Դրամաշնորհի զարգացման նպատակն է բարելավել պատրաստվածությունը **Ոռոգման համակարգի արդիականացման ծրագրի (ՈՀԱԾ)** իրականացման համար, որը կֆինանսավորվի Եվրասիական զարգացման բանկի (ԵԱԲ) Հակաճգնաժամային հիմնադրամի (ՀՃՀ) կողմից:

Խորհրդատվական ծառայությունների («Ծառայություններ») ընդհանուր նպատակներն են.

- Պատվիրատուի և ՋՕԸ-ների մասնագետների ուսուցման ծրագրի պատրաստում՝ ՈՀԱԾ-ով իրականացնելու համար;
- ՋՕԸ-ների գործունեությունը կարգավորող օրենսդրական դաշտի գնահատում՝ կատարելագործման առաջարկություններով;
- Ուսումնասիրել ոռոգման ջրի վարձավճարների հավաքագրման մեխանիզմները և միջոցառումներ առաջարկել հավաքագրման տոկոսն ավելացնելու համար;
- Մշակել միջոցառումներ՝ հեռահաղորդակցման ժամանակակից բոլոր միջոցների կիրառմամբ, ջրօգտագործողների իրազեկումը մեծացնելու նպատակով ՋՕԸ-ների ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումն ապահովելու համար;
- Իրականացնել ՋՕԸ-ների ինստիտուցիոնալ զարգացման ուսումնասիրություն՝ ոռոգման ոլորտում բարեփոխումների հետագա զարգացման առաջարկություններով, կառավարման մարմինների գործունեության խրախուսման և շահագրգռման մեխանիզմների ուսումնասիրություն;
- Կազմել ոռոգման համակարգի մասնակցային կառավարումը խթանելու հայեցակարգի և ռազմավարության նախագիծ (առաջարկվում է ներկայացնել կոնկրետ խթանող քայլեր, միջոցառումներ) իրականացնել ջրօգտագործողների և նրանց ներկայացուցիչների իրազեկման աստիճանի բարձրացման միջոցառումների վերլուծություն, մշակել ՋՕԸ-ների պիլոտային ֆեդերացիայի ստեղծման ռազմավարության նախագիծ;
- Ոռոգման նոր տեխնոլոգիաների կիրառման արդյունավետության վերաբերյալ իրազեկման մակարդակի բարձրացման մեխանիզմների ուսումնասիրություն;
- Ջրօգտագործողների սպասարկման մակարդակի բարձրացման միջոցառումների ուսումնասիրություն և դրանց բարելավմանը ուղղված առաջարկությունների ներկայացում;
- Ֆինանսական հաշվառման նպատակով ջրօգտագործողների գծով առաջացած դեբիտորական պարտքերի, հնարավոր կորուստների պահուստների ձևավորման և դուրսգրման կարգի մշակում՝ընդգրկելով անհրաժեշտ սկզբունքները, գործիքները, գնահատման մեխանիզմները և չափորոշիչները, կոնկրետ սահմանելով այն գործիքները և գնահատականները;
- Դեբիտորական պարտքերի դուրսգրման գործընթացը կարգավորող իրավական դաշտի ուսումնասիրություն և 2004-2008թթ ջրօգտագործողների գծով առաջացած դեբիտորական պարտքերի՝ առանց հարկային պարտականությունների առաջացման դուրսգրման լուծումների, ներառյալ գոյություն ունեցող օրենսդրության փոփոխությունների մշակում;
- Հաշվառման համակարգի շարունակական զարգացման ապահովման նպատակով, ուսումնասիրել և գնահատել ՋՕ Ընկերությունների կողմից շահագործվող պոմպային ագրեգատների փաստացի էլ. էներգիայի ծախսերը և վերլուծել ու առաջարկություններ

ներկայացնել էլ. հաշվիչների հիմքի վրա տվյալների հավաքագրման սկզբա համակարգի կառուցման հնարավորության և արդյունավետության վերաբերյալ;
- վերոնշյալի հիման վրա պատրաստել ինստիտուցիոնալ զարգացման բաղադրիչի մանրամասն նկարագրություն՝ ՈՀԱԾ համար:

Ենթադրվում է, որ խորհրդատվական ծառայությունները կսկսվեն **2015թ. հունվարին**: Հանձնարարության տևողությունը **3 (երեք) ամիս** է՝ պայմանագրի ստորագրման պահից (Հիմնական փորձագետների հաշվարկային ներգրավածությունը՝ 15 մարդ*ամիս):

Սույնով **«Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը** հրավիրում է իրավասու խորհրդատվական ընկերություններին («խորհրդատուներ») հայտնել իրենց շահագրգռվածությունը ծառայությունների մատուցման համար: Շահագրգիռ խորհրդատուները պետք է ներկայացնեն տեղեկություններ (բրոշյուրներ, նման աշխատանքների նկարագրություններ, համանման պայմանների փորձ, աշխատանքն իրականացնելու համար տեխնիկական ռեսուրսների մատչելիություն, հիմնական աշխատակազմի ընդհանուր որակավորումներն ու թիվը և այլն), որոնք ցույց կտան, որ իրենք ունեն պահանջվող որակավորումներ և համապատասխան փորձ ծառայությունները կատարելու համար:

Կարճ ցուցակում ընդգրկվելու չափանիշները հետևյալն են.

(i) ընկերության ընդհանուր փորձը *(գործունեության հիմնական տեսակը և փորձը տարիներով)*- **20 միավոր;**
(ii) հանձնարարության ոլորտում ընկերության փորձը *(փորձը ոլորտում (տարիներ) և վերջին 10 տարիների ընթացքում իրականացրած համանման աշխատանքների թիվը)*- **60 միավոր;**
(iii) հիմնական աշխատակազմի ընդհանուր որակավորումն ու թիվը *(CV-ները չի պահանջվում)* – **15 միավոր;**
(iv) ընկերության փորձը համանման տարածաշրջաններում և պայմաններում *(Հայաստան/ԱՊՀ երկրներ)* – **5 միավոր:**

Շահագրգիռ խորհրդատուների ուշադրությունը հրավիրում ենք Համաշխարհային բանկի ուղեցույցների՝ *«Համաշխարհային բանկի փոխառուների կողմից ՎՁՄԲ-ի փոխառությունների և ՄՁԸ-ի վարկերի և դրամաշնորհների շրջանակներում խորհրդատուների ընտրություն և վարձում, Հունվար 2011, վերանայված 2014թ. հուլիսին»* («Խորհրդատուների Ուղեցույցներ»), 1.9 կետի վրա, որով սահմանվում է Համաշխարհային բանկի քաղաքականությունը շահերի բախման մասով *(Guidelines: Selection and Employment of Consultants under IBRD Loans and IDA Credits & Grants by World Bank Borrowers, January 2011, revised July 2014):*

Խորհրդատուները կարող են միավորվել այլ ընկերությունների հետ **համատեղ ձեռնարկության** կամ **ենթախորհրդատվության** ձևով իրենց որակավորումներն ուժեղացնելու նպատակով *(խնդրում ենք հստակ նշել միավորման կարգավիճակը, օրինակ՝ «Համատեղ ձեռնարկություն» կամ «Ենթախորհրդատու»)*:

Խորհրդատուի ընտրությունն իրականացվելու է **Խորհրդատուների որակի վրա հիմնված ընտրության մեթոդով (CQS)**, որը սահմանվում է Խորհրդատուների Ուղեցույցներում:

Լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ ստորև նշված հասցեով աշխատանքային ժամերին՝ **ժ.10:00–17:00 (Երևանի ժամանակով), երկուշաբթի օրվանից մինչև ուրբաթ**:

Շահագրգռվածության հայտը պետք է ներկայացվի **անգլերեն** կամ **հայերեն** լեզվով գրավոր՝ տպված օրինակով կամ էլ. փոստով՝ **Adobe PDF** ձևաչափով ստորև նշված հասցեով՝ **2014թ. նոյեմբերի 28**-ից ոչ ուշ և պետք է հստակ նշվի որպես՝ **«Շահագրգռվածություն հայտնելու հայտ "Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագրի (ՈՀԱԾ) համար ինստիտուցիոնալ զարգացման ուսումնասիրություններ", ISMP/GR/CQS/SW-14/001»**:

«Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ
Պրն. Մարտին Չարյան, գնումների մասնագետ
ՀՀ, Երևան 0033, Բաղրամյան պող. 75/44
Հեռ՝ (+37410) 277-943 (ընդունարան), 227-946; 266-058 (գնումների բաժին)
Էլ. փոստ՝ mcharyan@wsdp.am; cc: gpetrosyan@wsdp.am